



ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ

- Առաջին անգամ դիմող անձանց համար համագործակցության պարտավորությունների մասին պարզաբանում և
- Ընդհանուր ընթացակարգային ցուցումներ առաջին անգամ դիմող անձանց համար

Իրավունքներ և պարտավորություններ ապաստանի ընթացակարգի ընթացքում

- ազգային պարզաբանում -

Հարգելի տիկին, հարգելի պարոն,

Դուք Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ապաստանի դիմում եք ներկայացրել և այն դեռ պետք է պաշտոնապես ներկայացնեք: Այս դիմումը քննվում է Միգրացիայի և փախստականների դաշնային գրասենյակի՝ Ջեզ համար իրավասու մասնաճյուղում (այսուհետ՝ Դաշնային գրասենյակ): Եվրոպական միության ապաստանի գործակալության (EUAA) «Ինչ պետք է իմանաք, եթե ցանկանում եք դիմել միջազգային պաշտպանության համար» տեղեկաթերթում Ջեզ արդեն տրամադրվել է տեղեկություն ապաստանի ընթացակարգի վերաբերյալ: Բացի այդ, ստորև ստանում եք ապաստանի ընթացակարգի իրականացման վերաբերյալ հետևյալ ցուցումները:¹

1. Տեղեկություններ Ձեր բնակության վայրի և գտնվելու մասին

Ընդունման կենտրոնում բնակվելու պարտավորություն Ապաստանի մասին օրենքի
§§ 47, 48, 49

Ընդունման կենտրոնում բնակվելու պարտավորության տևողությունը կախված է տարբեր գործոններից:

Ապաստանի ընթացակարգի իրականացման ընթացքում Դուք պարտավոր եք բնակվել այն ընդունման կենտրոնում, որը կցված է Դաշնային գրասենյակի համապատասխան մասնաճյուղին: Ապաստանի դիմումը մերժվելու դեպքում բնակվելու պարտավորությունը պահպանվում է մինչև երկրից մեկնելը կամ մինչև արտաքսման մասին նախազգուշացման կամ կարգադրության կատարումը: Հնարավոր է, որ ապաստանի ընթացակարգով որոշումը կայացվի միայն ընդունման կենտրոնում Ձեր գտնվելու ժամանակահատվածից հետո:

Սակայն բնակվելու պարտավորությունը գործում է առավելագույնը 18 ամիս ժամկետով: Անչափահաս երեխաներ ունեցող ընտանիքների դեպքում (ծնողներ/խնամքի իրավունք ունեցող անձինք,

¹Սույն ծանուցումը ապաստանի ընթացակարգի վերաբերյալ ընդհանուր պարզաբանում է: Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս ցուցումները ամբողջությամբ կիրառելի չեն EU+ երկրների բաղադրիչների, անչափահասների և կալանավայրից ապաստանի դիմում ներկայացնելու դեպքերի նկատմամբ: Այդ դեպքերում կարող են գործել այլ կանոններ. նման դեպքերում խնդրում ենք դիմել Դաշնային գրասենյակին:

անչափահաս երեխաներ և չափահաս, չամուսնացած քույրեր ու եղբայրներ) բնակվելու պարտավորությունը գործում է միայն մինչև վեց ամիս:

Եթե Դուք գալիս եք անվտանգ ծագման պետությունից, բնակվելու պարտավորության առավելագույն ժամկետը չի կիրառվում: Այդ դեպքում Դուք պետք է բնակվեք ընդունման կենտրոնում մինչև ապաստանի դիմումի վերաբերյալ որոշման կայացումը: Եթե ապաստանի դիմումը մերժվում է որպես ակնհայտ անհիմն, կամ եթե որոշում է կայացվում Ձեզ փոխանցել մեկ այլ EÜ+ երկիր, բնակվելու պարտավորությունը գործում է մինչև երկրից մեկնելը: Այս կարգավորումից բացառվում են անչափահաս երեխաները և նրանց ծնողները կամ խնամքի իրավունք ունեցող այլ անձինք, ինչպես նաև նրանց չափահաս, ամուրի քույրերն ու եղբայրները: Անվտանգ ծագման պետությունների ցանկը կարող եք գտնել հավելվածում:

Նույնիսկ եթե Դուք անվտանգ ծագման պետությունից չեք գալիս, կարող է Ձեզ վրա դրվել պարտավորություն՝ մինչև Դաշնային գրասենյակի կողմից ապաստանի դիմումի վերաբերյալ որոշման կայացումը բնակվել ընդունման կենտրոնում: Եթե ապաստանի դիմումը մերժվում է որպես ակնհայտ անհիմն կամ որպես անթույլատրելի, այդ պարտավորությունը կարող է երկարացվել մինչև երկրից մեկնելը: Այդ դեպքերում բնակվելու պարտավորությունը ընդհանուր առմամբ կարող է տևել մինչև 24 ամիս:

Գերմանիայի Դաշնային Հանրապետության տարածքում գտնվելը Ապաստանի մասին օրենքի §§ 55, 56, 64

Ձեր ապաստանի ընթացակարգն իրականացնելու համար Դուք ստանում եք կացության թույլտվությունը հաստատող վկայական, որը Ձեզ թույլ է տալիս գտնվել Գերմանիայի Դաշնային Հանրապետության սահմանափակ տարածքում: Այդ տարածքը նշված է կացության թույլտվությունը հաստատող Ձեր վկայականում: Կացության թույլտվությունը հաստատող վկայականը պետք է մշտապես Ձեզ մոտ ունենաք: Եթե ցանկանում եք ժամանակավորապես լքել կացության թույլտվությունը հաստատող վկայականում նշված տարածքը, դրա համար, որպես կանոն, Ձեզ անհրաժեշտ է թույլտվություն, որը կարող եք ստանալ Դաշնային գրասենյակից, քանի դեռ պարտավոր եք բնակվել ընդունման կենտրոնում: Պետական մարմիններում և դատարաններում այն հանդիպումներին, որոնց ժամանակ Ձեր անձնական ներկայությունը պարտադիր է, կարող եք ներկայանալ առանց թույլտվության: Այդ հանդիպումների մասին Դուք պետք է տեղեկացնեք Դաշնային գրասենյակին:

Խնդրում ենք հայտնել, արդյոք ընտանիքի անդամներ արդեն գտնվում են Գերմանիայում, որտեղ են նրանք բնակվում և արդյոք նրանք Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ապաստանի ընթացակարգ են վարում կամ նախկինում վարել են:

Աշխատանքային գործունեություն Ապաստանի մասին օրենքի § 61

Քանի դեռ պարտավոր եք բնակվել ընդունման կենտրոնում, իրավունք չունեք զբաղվել աշխատանքային գործունեությամբ: Եթե Ձեր ապաստանի ընթացակարգը ապաստանի դիմումի գրանցումից հետո երեք ամսվա ընթացքում վերջնական և անբողոքարկելի ձևով չի ավարտվել, որոշակի պայմանների դեպքում Ձեզ կարող է թույլատրվել աշխատանքային գործունեություն իրականացնել:

Փաստաթղթերի հանձնման կանոններ և բնակության վայրի փոփոխության մասին տեղեկացնելու պարտավորություն Եվրոպական միության 2024/1348 կանոնակարգի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերություն, Ապաստանի մասին օրենքի § 10-ի 1-ին և 2-րդ պարբերություններ, Բնակության մասին օրենքի § 50-ի 4-րդ պարբերություն

Ապաստանի ընթացակարգում Դաշնային գրասենյակի և օտարերկրացիների հարցերով մարմնի ծանուցումները, կանչերը կամ որոշումները պետք է Ձեզ հանձնվեն:

Եթե բնակվում եք ընդունման կենտրոնում, պետք է տեղեկանաք, թե երբ և որտեղ է բաժանվում պաշտոնական փոստը: Դա տեղի է ունենում աշխատանքային օրերից մեկին՝ սահմանված ժամերին: Այդ վայրում Դուք Ձեր փոստը ստանում եք ընդունման կենտրոնի աշխատակցից: Եթե այդ ժամերին այնտեղ չեք վերցնում փոստը, այն առնվազն չորս օր պահվում է Ձեզ համար՝ վերցնելու նպատակով:

Հանձնումները և ոչ պաշտոնական ծանուցումները համարվում են կատարված հանձնման օրը, եթե դրանք ընդունման կենտրոնին փոխանցելուց հետո չորս օրվա ընթացքում Ձեզ են հանձնվում: Եթե չորս օրվա ընթացքում հանձնում տեղի չի ունենում, ընդունման կենտրոնին փոխանցելուց հետո չորրորդ օրը համարվում է հանձնման օր՝ նույնիսկ եթե Դուք փոստը չեք ստանում կամ ստանում եք ավելի ուշ:

Եթե Ձեզ հանձնում տեղի չի ունենում, փոստը վերադարձվում է համապատասխան մարմնին: Խնդրում ենք նկատի ունենալ, որ այս կերպ որոշված հանձնման կամ ծանուցման օրը որոշիչ է նաև հնարավոր ժամկետների սկսվելու համար: Սա հատկապես վերաբերում է նաև Դաշնային գրասենյակի որոշումը դատարանում հնարավոր բողոքարկելու ժամկետին:

Դուք պարտավոր եք բնակության վայրի յուրաքանչյուր փոփոխության մասին տեղեկացնել Դաշնային գրասենյակին և օտարերկրացիների հարցերով մարմնին: Դատական վարույթի դեպքում Ձեր նոր հասցեն պետք է հայտնեք նաև վարչական դատարանին: Սա գործում է նաև այն դեպքում, երբ պետական մարմնի կողմից Ձեզ հատկացվել են նոր բնակավայր և նոր կացարան, քանի որ հատկացման համար պատասխանատու մարմինները, որպես կանոն, Դաշնային գրասենյակից տարբեր մարմիններ են:

Ուղարկումը միշտ կատարվում է այն վերջին հասցեով, որը հաղորդվել է համապատասխան մարմնին կամ դատարանին: Եթե Ձեր հասցեն փոխվել է, բայց այդ մասին իրավասու մարմինները չեն տեղեկացվել, փոստը ուղարկվում է Ձեր հին հասցեով:

Այդ ծանուցումը, կանչը կամ որոշումը ուժի մեջ է նաև այն դեպքում, եթե Դուք այլևս այնտեղ չեք բնակվում և այդ պատճառով դրա բովանդակության մասին տեղեկություն չեք ստանում:

Եթե չեք հայտնում Ձեր բնակության վայրի փոփոխության մասին, դա կարող է Ձեզ համար լուրջ հետևանքներ ունենալ: Ի թիվս այլ հետևանքների, Դաշնային գրասենյակը կարող է Ձեր ապաստանի դիմումը հետ վերցված համարել կամ բովանդակային պաշտոնական քննությունից հետո այն մերժել (տես՝ լռելյայն հետ վերցնելը):

Հնարավոր է նաև, որ Դուք բաց թողնեք իրավական պաշտպանության միջոց ներկայացնելու հայցի ժամկետը, և Դաշնային գրասենյակի որոշումը դառնա անբողոքարկելի, եթե չեք հայտնել Ձեր նոր բնակության վայրը և դրա պատճառով փոստը ուղարկվում է Ձեր հին բնակության վայրով:

Պարտադիր բողոքարկման ժամկետները երբեմն շատ կարճ են, այնպես որ Դուք պետք է անմիջապես քայլեր ձեռնարկեք (օրինակ՝ կապ հաստատեք փաստաբանի հետ): Հակառակ դեպքում որոշման անբողոքարկելի դառնալու դեպքում որոշակի հանգամանքներում Դուք կարող եք անմիջապես արտաքսվել:

Եթե Ձեր ապաստանի դիմումը մերժվում է, և Դուք պարտավոր եք մեկնել երկրից, Դուք շարունակում եք պարտավոր լինել նախապես օտարերկրացիների հարցերով Ձեզ համար իրավասու մարմնին հայտնել բնակության վայրի յուրաքանչյուր փոփոխության և օտարերկրացիների հարցերով մարմնի շրջանը երեք օրից ավելի ժամկետով յուրաքանչյուր լքելու մասին: Եթե խախտեք այդ պարտավորությունը, պետք է հաշվի առնեք, որ կարող եք հայտարարվել ձերբակալման համար որոնման մեջ կամ վերցվել արտաքսման նպատակով կալանքի տակ:

2. Ապաստանի ընթացակարգը

Ձեր ապաստանի դիմումի քննության համար իրավասություն Եվրոպական միության 2024/1351 կանոնակարգի 16-րդ հոդված

Եթե Ձեր ապաստանի դիմումի քննության համար իրավասու է մեկ այլ EU+ երկիր, Դուք կփոխանցվեք այդ երկրին: Այդ որոշումը կայացվում է իրավասության որոշման ընթացակարգում: Միայն այն

դեպքում, երբ հաստատվում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության իրավասությունը, Գերմանիան որոշում կկայացնի Ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ:

Անվճար իրավական տեղեկություն Ապաստանի մասին օրենքի § 12b, Ապաստանի ընթացակարգի կանոնակարգի 15-րդ և 16-րդ հոդվածներ, Ապաստանի և միգրացիայի կառավարման կանոնակարգի 21-րդ հոդված

Ապաստանի ընթացակարգի ընթացքում վարչական ընթացակարգի բոլոր փուլերում Դուք հնարավորություն ունեք օգտվել անվճար իրավական տեղեկությունից: Եթե առաջին անգամ եք դիմում միջազգային պաշտպանության համար, սա վերաբերում է նաև իրավասության որոշման ընթացակարգին:

Այդ նպատակով Դաշնային գրասենյակից կատանաք կամավոր գրույցի հրավեր, որի բովանդակությունը լեզվական միջնորդի կողմից կթարգմանվի Ձեզ անհրաժեշտ լեզվով: Անվճար իրավական տեղեկության շրջանակում Դուք ստանում եք կարևոր տեղեկություններ ընթացակարգերի բովանդակության և ընթացքի, Ձեր իրավունքների և պարտավորությունների վերաբերյալ, ինչպես նաև աջակցություն ապաստանի դիմումը ներկայացնելու և լսմանը պատրաստվելու հարցերում: Դուք տեղեկություն կստանաք նաև այն մասին, թե ինչ կարող եք անել, եթե համաձայն չեք Ձեր ընթացակարգում կայացված որոշման հետ:

Որոշ դեպքերում չեք կարող օգտվել անվճար իրավական տեղեկությունից, օրինակ՝ եթե ունեք իրավական խորհրդատվություն:

Ապաստանի դիմումի սահմանափակումը Ապաստանի մասին օրենքի § 13-ի 1-ին պարբերություն

Եվրոպական իրավունքով նախատեսված միջազգային պաշտպանությունից բացի, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գոյություն ունի նաև ազգային, Հիմնական օրենքով պաշտպանված ապաստանի իրավունք: Դուք հնարավորություն ունեք Ձեր ապաստանի դիմումը սահմանափակել միջազգային պաշտպանության տրամադրմամբ:

Եթե մինչև որոշման կայացումը Ձեր ապաստանի դիմումը սահմանափակել եք միջազգային պաշտպանության տրամադրմամբ, Դաշնային գրասենյակը չի որոշում ապաստանի իրավունքի ճանաչման հարցը, նույնիսկ եթե ճանաչման հիմքեր առկա լինեն:

Համագործակցության պարտավորություններ Ապաստանի մասին օրենքի §§ 8, 15, 15a, 16, Ապաստանի ընթացակարգի կանոնակարգի 9-րդ հոդվածի 2-րդ պարբերություն և 41-րդ հոդվածի 1-ին պարբերություն

Ձեր պաշտպանության կարիքի քննության համար Դաշնային գրասենյակը կախված է Ձեր համագործակցությունից: Ուստի, հատկապես Ապաստանի մասին օրենքի § 15-ի համաձայն, Դուք անձամբ պարտավոր եք համագործակցել փաստական հանգամանքների պարզաբանման հարցում:

Դրա համար անհրաժեշտ տվյալները պետք է տրամադրեք բանավոր, իսկ պահանջի դեպքում նաև գրավոր՝ ճշմարտացիորեն և ըստ Ձեր լավագույն գիտելիքի ու խղճի: Եթե Ձեր մոտ կա անձնագիր կամ այլ անձը հաստատող փաստաթղթեր, Դուք պետք է դրանք ներկայացնեք և Դաշնային գրասենյակին տրամադրեք ստուգման համար: Սա վերաբերում է նաև բոլոր այլ վկայականներին կամ փաստաթղթերին, որոնք կարող են նշանակություն ունենալ ապաստանի ընթացակարգի և միջոցառումների համար, այդ թվում՝ մեկ այլ պետություն վերադարձնելու հնարավորությունների պարզման և իրացման համար: Հնարավոր պահված փաստաթղթերի վերաբերյալ Դուք ստանում եք բնօրինակի պատճենը: Եթե չունեք վավեր անձնագիր կամ անձնագրին փոխարինող փաստաթուղթ, Դուք պարտավոր եք մասնակցել անձը հաստատող փաստաթուղթ ձեռք բերելուն, որքանով դա հնարավոր և ողջամտորեն ակնկալելի է: Դուք պետք է հիմնավորեք Ձեր անձը հաստատող և

ճանապարհորդական փաստաթղթերի բացակայությունը: Բացի այդ, եթե չեք կարող ներկայացնել վավեր անձնագիր, անձնագրին փոխարինող փաստաթուղթ կամ անձը հաստատող այլ համապատասխան ապացույց, Դուք պարտավոր եք պահանջի դեպքում Դաշնային գրասենյակին ներկայացնել, հանձնել կամ տրամադրել բոլոր տվյալակիրները (օրինակ՝ քջջային հեռախոսներ), որոնք կարող են նշանակություն ունենալ Ձեր ինքնության և քաղաքացիության պարզման համար, ինչպես նաև տրամադրել անհրաժեշտ մուտքային տվյալները, այդ թվում՝ ամսալսին ծառայությունների համար: Այդ տվյալակիրները և ամսալսին ծառայությունները կարող են կարդացվել Դաշնային գրասենյակի կողմից, իսկ կարդացված տվյալները՝ գնահատվել: Եթե չկատարեք այդ պարտավորությունը, իրավասու մարմինները կարող են գնել Ձեզ և Ձեր հետ եղած իրերը: Այդ գնումը կատարվում է Ձեր սեռին պատկանող անձի կողմից:

Ձեզ լուսանկարելու են և վերցնելու են մատնահետքերը: Դուք պարտավոր եք թույլ տալ այդ միջոցառումների իրականացումը: Վեց տարեկանից փոքր երեխաներից մատնահետքեր չեն վերցվում:

Բացի այդ, Դուք պետք է տեղեկացնեք Դաշնային գրասենյակին, հենց որ Ձեզ տրամադրվի կացության իրավունքի փաստաթուղթ կամ փոփոխություն առաջանա գտնվելու վայրի, հասցեի, հեռախոսահամարի կամ էլեկտրոնային փոստի հասցեի վերաբերյալ: Դուք պետք է ներկայանաք պետական մարմնի կողմից նշանակված Ձեր հանդիպումներին, հատկապես՝ անձնական լսմանը: Դուք իրավունք չունեք լքել Գերմանիան մինչև Ձեր ապաստանի ընթացակարգի ավարտը կամ մինչև իրավասու անդամ պետությանը փոխանցվելը: Եթե մեկնում եք Ձեր ծագման պետություն, Դաշնային գրասենյակը այդ մասին տեղեկանում է այլ պետական մարմիններից:

Համագործակցության պարտավորությունների կատարումը Ձեզ համար չափազանց կարևոր է: Ձեր համագործակցության պարտավորությունները խախտելու դեպքում Ձեր դիմումը կարող է համարվել լռելյայն հետ վերցված, ինչը հանգեցնում է ապաստանի ընթացակարգի դադարեցմանը կամ, բովանդակային պատշաճ քննությունից հետո, Ձեր դիմումի մերժմանը: Մանրամասների համար խնդրում ենք ուշադրություն դարձնել «ապաստանի դիմումի լռելյայն հետ վերցնելը» բաժնում ներկայացված ավելի մանրամասն բացատրություններին:

Բացի այդ, համագործակցության պարտավորությունների խախտումը որոշ դեպքերում հանգեցնում է Ձեր՝ որպես ապաստան հայցողի ստացվող նպաստների կրճատմանը, քանի որ Դաշնային գրասենյակը փոխանցում է համապատասխան տեղեկությունները (Ապաստան հայցողների նպաստների մասին օրենքի § 1a-ի 5-րդ պարբերություն և Ապաստանի մասին օրենքի § 8-ի 2a պարբերություն): Որոշ պայմանների դեպքում համագործակցության խախտումը հանգեցնում է նրան, որ Դուք պարտավոր եք 18 ամսից ավելի բնակվել ընդունման կենտրոնում (Ապաստանի մասին օրենքի § 47-ի 1-ին պարբերություն):

Եթե Դուք պետական մարմիններին դիտավորյալ մոլորեցնում եք սխալ տեղեկություններով կամ փաստաթղթերով, կարևոր տեղեկությունները թաքցնելով կամ փաստաթղթերը պահելով՝ հատկապես Ձեր ինքնության կամ քաղաքացիության վերաբերյալ, որոնք կարող էին բացասաբար ազդել որոշման վրա, Ձեր ընթացակարգը կարող է քննվել արագացված քննության ընթացակարգով: Նույնը վերաբերում է նաև այն դեպքին, երբ Դուք դիտավորյալ մոլորեցնում եք անձը հաստատող կամ ճանապարհորդական փաստաթղթերը՝ Ձեր ինքնության կամ քաղաքացիության պարզումը կանխելու նպատակով:

Ձեր համագործակցության պարտավորությունները մնում են ուժի մեջ նաև ապաստանի դիմումը բացահայտ կամ լռելյայն հետ վերցնելու դեպքում:

Լսում Ապաստանի ընթացակարգի կանոնակարգի 11-րդ, 12-րդ, 13-րդ և 55-րդ հոդվածներ, Ապաստանի մասին օրենքի § 10-ի 3-րդ պարբերություն, § 17 և § 25-ի 2-րդ պարբերություն

Թույլատրելիության և բովանդակության վերաբերյալ լսումները կարող են անցկացվել միասին մեկ հանդիպման ընթացքում՝ սկսելով թույլատրելիության վերաբերյալ լսումից:

Դաշնային գրասենյակում լսման համար Դուք ստանում եք հանդիպման ժամկետ: Դուք պարտավոր եք անձամբ ներկայանալ այդ հանդիպմանը:

Խնդրում ենք անպայման ներկայանալ լսման հանդիպմանը: Եթե չեք կարող ներկայանալ հանդիպմանը, խնդրում ենք այդ մասին ժամանակին գրավոր տեղեկացնել Դաշնային գրասենյակին: Լսմանը կարող եք ներկայանալ Ձեր կողմից լիազորված փաստաբանի կամ վստահելի անձի (աջակցող անձի) ուղեկցությամբ: Մակայն Դաշնային գրասենյակը կարող է լսումն անցկացնել նաև այն դեպքում, եթե լիազորված ներկայացուցիչը կամ աջակցող անձը առանց նախապես բավարար արդարացման չի մասնակցում լսմանը, թեև կանչը կամ հանդիպման մասին ծանուցումը ժամանակին ուղարկվել է: Դաշնային գրասենյակի աշխատակիցը Ձեզ կլսի ապաստանի դիմում ներկայացնելու Ձեր պատճառների վերաբերյալ: Այդ աշխատակիցը ծանոթ է Ձեր ծագման պետության պայմաններին: Լսման ժամանակ տրամադրվում է նաև լեզվական միջնորդի աջակցություն: Դուք իրավունք ունեք լրացուցիչ, Ձեր հաշվին, ներգրավել Ձեր ընտրությամբ համապատասխան լեզվական միջնորդի: Լսման ընթացքում Ձեզ հնարավորություն է տրվում հիմնավորել Ձեր ապաստանի դիմումը: Դուք պետք է ներկայացնեք, թե ինչ պատճառներով եք վախենում հետապնդումից կամ լուրջ վնասից և այդ պատճառով ապաստանի դիմում եք ներկայացրել, ինչպես նաև որ այլ փաստերն ու հանգամանքներն են խոչընդոտում Ձեր վերադարձին ծագման պետություն: Կարևոր է, որ Դուք ամբողջությամբ և ճշմարտացիորեն ներկայացնեք Ձեր անձնական պատմությունը և վերադարձի դեպքում Ձեզ կռնկրետ ապառնացող վտանգները: Պետք է նաև նշեք, թե ինչպես եք եկել Գերմանիա և արդյոք նախկինում երբևէ ապաստանի դիմում ներկայացրել եք: Դուք պարտավոր եք Ձեր մոտ եղած բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել ամենաուշը լսման ընթացքում: Այն փաստերը, որոնք Դուք չեք ներկայացնում լսման ընթացքում, հետագայում կարող են այլևս հաշվի չառնվել ինչպես Դաշնային գրասենյակում, այնպես էլ դատական վարույթում: Մա վերաբերում է նաև այն փաստաթղթերին, որոնք Դուք լսման ընթացքում չեք ներկայացնում:

Եթե Ձեր ընթացակարգում տվյալակիր է ընթերցվել, գնահատվել, և գնահատման արդյունքը, օրենքով սահմանված պահանջները պահպանելով, ներառվել է գործի նյութերում, այդ արդյունքները ապաստանի ընթացակարգում օգտագործվում են Ձեր ինքնության և քաղաքացիության պարզման համար:

Եթե ունեք հաղորդակցման դժվարություններ կամ առողջական պատճառներով չեք կարող հետևել լսմանը, այդ մասին ասեք Դաշնային գրասենյակի աշխատակցին:

Նշում

Լսումը և լեզվական միջնորդությունը կարող են իրականացվել այն սեռի անձանց կողմից, որին Դուք նախապատվություն եք տալիս, եթե հայտնում եք համապատասխան ցանկություն, և դրա հնարավորությունը կա:

Դաշնային գրասենյակն ունի հատուկ վերապատրաստված աշխատակիցներ այն անձանց համար, որոնք տուժել են սեռով պայմանավորված հետապնդումից (օրինակ՝ բռնաբարություն, սեռական բռնության այլ ձևեր, սեռական օրգանների խեղման ապառնայիք, LGBTIQ անձինք), ուղեկցող չունեցող անչափահասների, տրավմա ստացած անձանց և խոշտանգումների զոհերի, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի զոհերի համար: Եթե Ձեր փաստական ներկայացումը վերաբերում է դրան, խնդրում ենք հնարավորինս վաղ՝ մինչև լսումը, հայտնել Ձեր ցանկությունը, որ լեզվական միջնորդությունը և լսումն իրականացվեն Ձեր նախընտրած սեռի անձի կողմից:

Լսման բովանդակության վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը պարունակում է Ձեր ներկայացրածի հիմնական պատճառները: Արձանագրությունը կարող է ուղղվել գերմաներենից հետադարձ թարգմանության ժամանակ առաջացած թյուրբանությունների մասով: Արձանագրությունը Ձեզ կամ հանձնվում է լսման ավարտին, կամ ուղարկվում է փոստով: Բացի այդ, Ձեր լսման ձայնագրություն է կատարվում և կցվում է գործի նյութերին:

Եթե Ձեր ամուսնու կամ կնոջ և Ձեր երեխաների հետ միասին համատեղ ապաստանի դիմում եք ներկայացրել և այդ անձանց հետ բնակվում եք նույն հասցեում, Դաշնային գրասենյակը կարող է ամբողջ ընտանիքի համար ծանուցումները և որոշումները համախմբել մեկ գրության մեջ և հանձնել ամուսիններից մեկին կամ ծնողներից մեկին:

3. Ապաստանի իրավունքի վարչական ընթացակարգի ավարտը

Ապաստանի իրավունքի վարչական ընթացակարգի ավարտից հետո Ձեր ապաստանի դիմումի

վերաբերյալ որոշումը Ձեզ հաղորդվում է գրավոր որոշմամբ: Եթե Ձեր ապաստանի դիմումը ամբողջությամբ մերժվում է, Դուք պարտավոր եք լքել Գերմանիան, եթե այդ որոշումը կապված է վերադարձի որոշման կայացման հետ:

Ձեր ապաստանի դիմումը կարող եք բացահայտ հետ վերցնել Դուք, կամ այն կարող է Դաշնային գրասենյակի կողմից հայտարարվել հետ վերցված: Դիմումը հետ վերցնելու դեպքում Ձեր ընթացակարգը կարող է ավարտվել առանց բովանդակային քննության, կամ Ձեր ապաստանի դիմումը, չնայած դիմումը հետ վերցնելուն, կարող է բովանդակությամբ մերժվել, եթե հայտնի են որոշման համար նշանակություն ունեցող բոլոր հանգամանքները:

Ապաստանի դիմումը լռելյայն հետ վերցնելը Ապաստանի մասին օրենքի § 32,
Ապաստանի ընթացակարգի կանոնակարգի 41-րդ հոդված

Եթե որոշակի համագործակցության պարտավորություններ չեք կատարում, ենթադրվում է, որ դրանով լռելյայն հայտարարում եք Ձեր ապաստանի դիմումը հետ վերցնելու մասին: Մա տեղի է ունենում, եթե ապաստանի դիմումը ժամանակին չեք ներկայացնում, թեև դրա հնարավորություն ունեցել եք, եթե չեք ներկայանում Ձեր համար իրավասու ընդունման կենտրոն (որտեղ, անհրաժեշտության դեպքում, Ձեզ ուղղորդել են), կամ եթե կրկնակի անգամ չեք նշում Ձեր հասցեն կամ խախտում եք տեղեկացնելու պարտավորությունը: Բացի այդ, Ձեր դիմումը համարվում է լռելյայն հետ վերցված, եթե առանց հիմնավոր պատճառի չեք մասնակցել Ձեր լսմանը, հրաժարվում եք լուսանկարներ և մատնահետքեր վերցնելուց, կամ եթե լքում եք Գերմանիան մինչև ապաստանի ընթացակարգի ավարտը:

Եթե պարտավորության խախտման համար մեղավոր եք Դուք, Դաշնային գրասենյակը որոշում է կայացնում, որով հայտարարվում է, որ դիմումը լռելյայն հետ է վերցվել: Եթե Դաշնային գրասենյակն արդեն հաստատել է, որ Դուք չեք բավարարում միջազգային պաշտպանության կարգավիճակ ստանալու պայմանները, այն մերժում է Ձեր ապաստանի դիմումը:

Եթե Ձեր ապաստանի դիմումը հայտարարվում է լռելյայն հետ վերցված, Դաշնային գրասենյակը առանց լրացուցիչ լսման, գործի նյութերի հիման վրա որոշում է, թե արդյոք առկա է արտաքսման արգելք, և անհրաժեշտության դեպքում կայացնում է վերադարձի որոշում: Եթե Ձեր ապաստանի դիմումի քննության համար իրավասու է մեկ այլ EU+ երկիր, Դաշնային գրասենյակը որոշում է կայացնում, որ Դուք պետք է փոխանցվեք այնտեղ:

Չնայած ապաստանի դիմումը հետ վերցնելուն՝ Ձեր համագործակցության պարտավորությունները մնում են ուժի մեջ: Կացության թույլտվությունը հաստատող Ձեր վկայականի գործողությունը ավարտվում է, և Դուք պարտավոր եք մեկ շաբաթվա ընթացքում լքել Գերմանիան: Հնարավոր է, որ Ձեր նկատմամբ սահմանվի մուտքի և բնակության արգելք:

Ապաստանի դիմումը բացահայտ հետ վերցնելը Ապաստանի մասին օրենքի § 32,
Ապաստանի ընթացակարգի կանոնակարգի 40-րդ հոդվածի համապատասխան պարբերություն

Եթե մտադիր եք ինքներդ հետ վերցնել Ձեր ապաստանի դիմումը, կարող եք դա անել ընթացակարգի ցանկացած պահի՝ մինչև Ձեր ապաստանի դիմումի վերաբերյալ որոշման վերջնական կամ իրավական ուժի մեջ մտնելը: Դա կարող եք անել անձամբ գրավոր ձևով կամ Ձեզ ներկայացնող փաստաբանի միջոցով Դաշնային գրասենյակի ցանկացած մասնաճյուղում և կենտրոնական գրասենյակում կամ այլ իրավասու մարմիններում (դաշնային կամ երկրամասային ոստիկանություն, քրեակատարողական հիմնարկ կամ օտարերկրացիների հարցերով մարմին): Դաշնային գրասենյակը կայացնում է որոշում, որով հայտարարում է, որ ապաստանի դիմումը բացահայտ հետ է վերցվել: Եթե Դաշնային գրասենյակն արդեն հաստատել է, որ Դուք չեք բավարարում միջազգային պաշտպանության կարգավիճակ ստանալու պայմանները, այն մերժում է Ձեր ապաստանի դիմումը: Եթե ապաստանի դիմումը հայտարարվում է բացահայտ հետ վերցված, Դաշնային գրասենյակը առանց լրացուցիչ լսման, գործի նյութերի հիման վրա որոշում է, թե արդյոք առկա է արտաքսման արգելք, և

անհրաժեշտության դեպքում կայացնում է վերադարձի որոշում: Եթե Ձեր պաշտպանության խնդրանքի քննության համար իրավասու է մեկ այլ EU+ երկիր, Դաշնային գրասենյակը որոշում է կայացնում, որ Դուք պետք է փոխանցվեք այնտեղ:

Այն որոշումը, որով հայտարարվում է, որ ապաստանի դիմումը բացահայտ հետ է վերցվել, չի կարող բողոքարկվել: Այդ որոշման դեմ իրավական պաշտպանության միջոց հնարավոր չէ: Մասկայն արտաքսման արգելքների վերաբերյալ եզրակացության, վերադարձի որոշման և դրա հետ կապված այլ կայացված որոշումների դեմ կարող եք իրավական պաշտպանության միջոց ներկայացնել: Ապաստանի դիմումը հետ վերցնելը չի դադարեցնում Ձեր համագործակցության պարտավորությունները: Հետ վերցնելու հայտարարություն անելու պահին Դուք տեղեկություն եք ստանում հետ վերցնելու բոլոր ընթացակարգային-իրավական հետևանքների մասին:

Կացության իրավունքի փաստաթուղթ տրամադրելու հետևանքները հետ վերցնելու կամ անբողոքարկելի մերժման դեպքում Ապաստանի մասին օրենքի § 14-ի 1-ին պարբերության 3-րդ նախադասություն՝ Բնակության մասին օրենքի § 10-ի 3-րդ պարբերության հետ համատեղ

Եթե Ձեր ապաստանի դիմումը համարվում է հետ վերցված, կամ Դուք բացահայտ հետ եք վերցրել ապաստանի դիմումը, կամ Ձեր դիմումը անբողոքարկելի կերպով մերժվել է, կացության իրավունքի փաստաթուղթ տրամադրելը ենթակա է որոշակի սահմանափակումների: Դրանից հետո կացության իրավունքի փաստաթուղթ կարող է տրամադրվել միայն միջազգային իրավունքի, մարդասիրական կամ քաղաքական պատճառներով կամ այլ նպատակներով (օրինակ՝ աշխատանքային գործունեության կամ մասնագիտական ուսուցման համար), եթե առկա է կացության իրավունքի փաստաթուղթ տրամադրելու պահանջի իրավունք:

Մասնագիտական ուսուցման կամ աշխատանքի հիմքով արտաքսման ժամանակավոր կասեցում Բնակության մասին օրենքի §§ 60c, 60d

Եթե Ձեր ապաստանի դիմումը մերժվում է, Դուք պարտավոր եք մեկնել երկրից: Հետագա գտնվելը կարող է թույլատրվել որպես արտաքսման ժամանակավոր կասեցում, եթե Դուք մասնագիտական ուսուցում եք անցնում կամ իրականացնում եք սոցիալական ապահովագրության վճարների ենթակա աշխատանք:

Այդպիսի արտաքսման ժամանակավոր կասեցումը, ի թիվս այլ պայմանների, պահանջում է, որ Ձեր ինքնությունը սուտքից հետո վեց ամսվա ընթացքում պարզված լինի: Ինքնությունը, որպես կանոն, ապացուցվում է անձնագրով: Եթե անձնագիր հնարավոր չէ ներկայացնել, կարող են հաշվի առնվել նաև Ձեր ծագման պետության կողմից տրված այլ պաշտոնական փաստաթղթեր, որոնք կարող են ապացուցել Ձեր ինքնությունը: Եթե նշված ժամկետի ընթացքում կատարել եք ինքնության պարզման համար անհրաժեշտ բոլոր գործողությունները, արտաքսման ժամանակավոր կասեցումը կարող է տրվել նաև այն դեպքում, երբ Ձեր ինքնությունը հնարավոր է պարզել միայն ավելի ուշ: Հետևաբար Ձեր շահերից է բխում ապաստանի ընթացակարգում ներկայացնել բոլոր փաստաթղթերը, որոնք կարող են ապացուցել Ձեր ինքնությունը: Մասնագիտական ուսուցման կամ աշխատանքի հիմքով արտաքսման ժամանակավոր կասեցման վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ կարող եք ստանալ Ձեզ համար իրավասու օտարերկրացիների հարցերով մարմնից:

Կամավոր վերադարձ Ապաստանի մասին օրենքի § 14-ի 3-րդ պարբերություն

Ձեր հայրենիք կամավոր վերադարձի հնարավորությունների վերաբերյալ Դուք լրացուցիչ առանձին տեղեկություններ կստանաք:

4. Զրեական դրույթներ Ապաստանի մասին օրենքի § 69-ի 1-ին պարբերություն, §§ 70, 84, 85 և 86

Եթե ստանում եք ընդունման կենտրոն ուղարկվելու կարգադրություն (հատկացման կարգադրություն) և անհապաղ չեք ներկայացնում նշված վայր, կարող եք պատժվել մինչև մեկ տարի ազատազրկմամբ կամ դրամական տուգանքով: Այդ պատիժը սպառնում է նաև այն դեպքում, եթե կրկնակի անգամ խախտում եք Ձեզ համար իրավասու օտարերկրացիների հարցերով մարմնի շրջանի նկատմամբ տարածքային գտնվելու սահմանափակումը: Մա գործում է նաև այն դեպքում, եթե ենթակա եք տարածքային սահմանափակման հատուկ կարգադրության և խախտում եք այն:

Եթե ի վիճակի չեք ինքնուրույն սպասեցվել Ձեր սպրտստը, կարող է Ձեզ վրա դրվել պարտավորություն տեղափոխվել որոշակի համայնք, բնակարան կամ կացարան կամ այնտեղ բնակվել, անհրաժեշտության դեպքում նաև մեկ այլ օտարերկրացիների հարցերով մարմնի շրջանում: Եթե դրան հակառակվեք, Ձեզ սպառնում է մինչև մեկ տարի ազատազրկում կամ դրամական տուգանք:

Եթե առանց թույլտվության սկսեք աշխատանքային գործունեություն, Ձեզ նույնպես սպառնում է մինչև մեկ տարի ազատազրկում կամ դրամական տուգանք:

Եթե, գիտակցելով հակառակը, Ձեր տարիքի, ինքնության կամ քաղաքացիության վերաբերյալ անհրաժեշտ տվյալ չեք ներկայացնում, սխալ կամ ոչ ամբողջական եք ներկայացնում, կամ հրաժարվում եք ներկայացնել կամ տրամադրել անձնագիր, անձնագրին փոխարինող փաստաթուղթ, անհրաժեշտ վկայական, այլ փաստաթղթեր կամ տվյալակիրներ, Ձեզ նույնպես սպառնում է մինչև մեկ տարի ազատազրկում կամ դրամական տուգանք:

Եթե ապաստանի ընթացակարգում Դաշնային գրասենյակի առջև կամ դատական վարույթում սխալ կամ ոչ ամբողջական տեղեկություններ եք տալիս՝ Ապաստանի մասին օրենքի § 1-ի 1-ին պարբերության 2-րդ կետի խմատով ապաստանի իրավունքի ճանաչմանը կամ միջազգային պաշտպանության տրամադրմանը հասնելու կամ պաշտպանության վերացումը կանխելու համար, Ձեզ սպառնում է մինչև երեք տարի ազատազրկում կամ դրամական տուգանք: Մա գործում է նաև այն դեպքում, եթե այլ օտարերկրացիների դրդում եք չարաշահող ապաստանի դիմում ներկայացնելու կամ ապաստանի ընթացակարգում սխալ տեղեկություններ հաղորդելու: Եթե դա անում եք գույքային առավելության համար կամ Ձեր հայտարարությամբ ազդում եք ավելի քան հինգ օտարերկրացու վրա, Ձեզ սպառնում է մինչև հինգ տարի ազատազրկում կամ դրամական տուգանք: Եթե այդպես գործում եք առևտրային եղանակով կամ որպես հանցախմբի անդամ, ապա դրա համար Ձեզ սպառնում է մինչև տասը տարի ազատազրկում: Փորձը պատժելի է:

Եթե հրապարակում կամ հասանելի եք դարձնում Ձեր լսման ժամանակ կատարված ձայնագրությունը կամ այնտեղ նշված որևէ հատված, Ձեզ սպառնում է մինչև 3.000 եվրո վարչական տուգանք: Մա գործում է նաև այն դեպքում, եթե խախտում եք Ձեզ հնարավոր է պարտադրված գտնվելու վայրի սահմանափակումը:

Ձեր որոշակի սխալ վարքագծի դեպքում հնարավոր է, որ դատավորի կարգադրությամբ Ձեզ կալանքի տակ վերցնեն: Մա հատկապես վերաբերում է այն դեպքերին, երբ թաքնվում եք Ձեր ինքնության պարզումը կանխելու համար, չեք կատարում տեղաշարժի ազատության սահմանափակումը կամ վտանգ եք ներկայացնում երրորդ անձանց նշանակալի իրավական բարիքների համար: Կալանքի վայրերը առանձնացված են տվորական քրեակատարողական կալանքի վայրերից: Կալանքը հնարավոր է, եթե Ձեր ինքնությունը կամ քաղաքացիությունը Ձեր պատասխանատվությամբ պայմանավորված պատճառներով չի կարող պարզվել, և Դուք խուսափում եք դրա հետագա պարզումից՝ թաքնվելով: Ապաստանի ընթացակարգային կալանքը հնարավոր է նաև այն դեպքում, եթե խախտում եք Ձեզ հնարավոր է պարտադրված տեղաշարժի ազատության սահմանափակումը, և առկա է փախուստի վտանգ: Եթե Դուք զգալի վտանգ եք ներկայացնում երրորդ անձանց կյանքի և առողջության կամ ներքին անվտանգության նշանակալի իրավական բարիքների համար, ապաստանի ընթացակարգային կալանքը նույնպես հնարավոր է:

Ապաստանի մասին օրենքից և Եվրոպական միության 2024/1348 կանոնակարգից կարևորագույն դրույթների քաղվածքները տպագրված են ստորև: Եթե այս կապակցությամբ հարցեր ունեք, խնդրում ենք անմիջապես դիմել Դաշնային գրասենյակին

§ 10 AsylG Zustellungsvorschriften (Auszug)

(1) Unbeschadet der Pflicht aus Artikel 9 Absatz 2 Unterabsatz 1 Buchstabe c der Verordnung (EU) 2024/1348 hat der Ausländerwährend der Dauer des Asylverfahrens vorzusorgen, dass ihn Mitteilungen des Bundesamtes, der zuständigen Ausländerbehörde und der angerufenen Gerichte stets erreichen können; insbesondere hat er jeden Wechsel seiner Anschrift den genannten Stellen unverzüglich anzuzeigen.

(2) Liegt ein Fall des Artikels 36 Absatz 1 Satz 2 der Verordnung (EU) 2024/1348 oder des Artikels 42 Absatz 3 der Verordnung (EU) 2024/1351 vor, soll an den Bevollmächtigten zugestellt werden, sofern der Ausländer einen solchen bestellt hat. Unbeschadet von Artikel 9 Absatz 3 Unterabsatz 1 der Verordnung (EU) 2024/1348 muss der Ausländer Zustellungen und formlose Mitteilungen unter der letzten Anschrift, die der jeweiligen Stelle nach Absatz 1 auf Grund seines Asylantrags oder seiner Mitteilung bekannt ist, gegen sich gelten lassen, wenn er für das Verfahren weder einen Bevollmächtigten bestellt noch einen Empfangsberechtigten benannt hat oder diesen nicht zugestellt werden kann. Das Gleiche gilt, wenn die letzte bekannte Anschrift, unter der der Ausländer wohnt oder zu wohnen verpflichtet ist, durch eine öffentliche Stelle mitgeteilt worden ist. Der Ausländer muss Zustellungen und formlose Mitteilungen anderer als der in Absatz 1 bezeichneten öffentlichen Stellen unter der Anschrift gegen sich gelten lassen, unter der er nach den Sätzen 2 und 3 Zustellungen und formlose Mitteilungen des Bundesamtes gegen sich gelten lassen muss. Kann die Sendung dem Ausländer nicht zugestellt werden, so gilt die Zustellung mit der Aufgabe zur Post als bewirkt, selbst wenn die Sendung als unzustellbar zurückkommt.

(3) Betreiben Familienangehörige im Sinne des § 26 Absatz 1 bis 3 ein gemeinsames Asylverfahren und ist nach Absatz 2 für alle Familienangehörigen dieselbe Anschrift maßgebend, können für sie bestimmte Entscheidungen und Mitteilungen in einem Bescheid oder einer Mitteilung zusammengefasst und einem Familienangehörigen zugestellt werden, sofern er volljährig ist. In der Anschrift sind alle volljährigen Familienangehörigen zu nennen, für die die Entscheidung oder Mitteilung bestimmt ist. In der Entscheidung oder Mitteilung ist ausdrücklich darauf hinzuweisen, gegenüber welchen Familienangehörigen sie gilt.

(4) In einer Aufnahmeeinrichtung hat diese Zustellungen und formlose Mitteilungen an die Ausländer, die nach Maßgabe des Absatzes 2 Zustellungen und formlose Mitteilungen unter der Anschrift der Aufnahmeeinrichtung gegen sich gelten lassen müssen, vorzunehmen. Postausgabe- und Postverteilungszeiten sind für jeden Werktag durch Aushang bekannt zu machen. Der Ausländer hat sicherzustellen, dass ihm Posteingänge während der Postausgabe- und Postverteilungszeiten in der Aufnahmeeinrichtung ausgehändigt werden können. Zustellungen und formlose Mitteilungen sind mit der Aushändigung an den Ausländer bewirkt; im Übrigen gelten sie am vierten Tag nach Übergabe an die Aufnahmeeinrichtung als bewirkt.

(5) Die Vorschriften über die Ersatzzustellung bleiben unberührt.

[...]

§ 12b AsylG Unentgeltliche Rechtsauskunft

(1) Das Bundesamt gewährt auf Ersuchen des Antragstellers unentgeltlich Rechtsauskunft nach Artikel 16 der Verordnung (EU) 2024/1348 und nach Artikel 21 der Verordnung (EU) 2024/1351.

(2) In den Fällen des Artikels 16 Absatz 3 der Verordnung (EU) 2024/1348 und des Artikels 21 Absatz 7 der Verordnung (EU) 2024/1351 ist die Rechtsauskunft ausgeschlossen.

§ 15 AsylG Allgemeine Mitwirkungspflichten

(1) Der Ausländer ist persönlich verpflichtet, bei der Aufklärung des Sachverhalts mitzuwirken. Dies gilt auch, wenn er sich durch einen Bevollmächtigten vertreten lässt.

(2) Er ist unbeschadet von Artikel 9 Absatz 2 der Verordnung (EU) 2024/1348 und Artikel 17 Absatz 3 der Verordnung (EU) 2024/1351 insbesondere verpflichtet,

1. den mit der Ausführung dieses Gesetzes betrauten Behörden die erforderlichen Angaben wahrheitsgemäß und nach bestem Wissen und Gewissen mündlich und nach Aufforderung auch schriftlich zu machen;

2. das Bundesamt unverzüglich zu unterrichten, wenn ihm ein Aufenthaltstitel erteilt worden ist;

3. den gesetzlichen und behördlichen Anordnungen, sich bei bestimmten Behörden oder Einrichtungen zu melden oder dort persönlich zu erscheinen, Folge zu leisten;

4. seinen Pass oder Passersatz den mit der Ausführung dieses Gesetzes betrauten Behörden vorzulegen, auszuhändigen und zu überlassen;

5. alle erforderlichen Urkunden und sonstigen Unterlagen, die in seinem Besitz sind, den mit der Ausführung dieses Gesetzes betrauten Behörden vorzulegen, auszuhändigen und zu überlassen;

6. im Falle des Nichtbesitzes eines gültigen Passes oder Passersatzes an der Beschaffung eines Identitätspapiers mitzuwirken und auf Verlangen alle Datenträger, die für die Feststellung seiner Identität und Staatsangehörigkeit von Bedeutung sein können und in deren Besitz er ist, den mit der Ausführung dieses Gesetzes betrauten Behörden vorzulegen, auszuhändigen und zu überlassen;

7. die vorgeschriebenen erkennungsdienstlichen Maßnahmen zu dulden.

(3) Erforderliche Urkunden und sonstige Unterlagen nach Absatz 2 Nr. 5 sind insbesondere

1. alle Urkunden und Unterlagen, die neben dem Pass oder Passersatz für die Feststellung der Identität und Staatsangehörigkeit von Bedeutung sein können,

2. von anderen Staaten erteilte Visa, Aufenthaltstitel und sonstige Grenzübertrittspapiere,

3. Flugscheine und sonstige Fahrausweise,

4. Unterlagen über den Reiseweg vom Herkunftsland in das Bundesgebiet, die benutzten Beförderungsmittel und über den Aufenthalt in anderen Staaten nach der Ausreise aus dem Herkunftsland und vor der Einreise in das Bundesgebiet sowie

5. alle sonstigen Urkunden und Unterlagen, auf die der Ausländer sich beruft oder die für die zu treffenden asyl- und ausländerrechtlichen Entscheidungen und Maßnahmen einschließlich der Feststellung und Geltendmachung einer Rückführungsmöglichkeit in einen anderen Staat von Bedeutung sind.

(4) Die mit der Ausführung dieses Gesetzes betrauten Behörden sowie die für die Aufnahmeeinrichtungen nach

§ 44 Absatz 1 zuständigen Behörden der Länder können den Ausländer und Sachen, die von ihm mitgeführt werden, durchsuchen, wenn der Ausländer seinen Verpflichtungen nach Absatz 2 Nummer 4 und 5 nicht nachkommt sowie nicht gemäß Absatz 2 Nummer 6 auf Verlangen die Datenträger vorlegt, aushändigt oder überlässt und Anhaltspunkte bestehen, dass er im Besitz solcher Unterlagen oder Datenträger ist. Der Ausländer darf nur von einer Person gleichen Geschlechts durchsucht werden.

(5) Durch die Rücknahme des Asylantrags werden die Mitwirkungspflichten des Ausländers nicht beendet.

§ 25 AsylG Anhörung im Asylverfahren (Auszug)

(1) Der Ausländer hat alle Tatsachen und Umstände anzugeben, die einer Abschiebung oder einer Abschiebung in einen bestimmten Staat entgegenstehen.

(2) Ein späteres Vorbringen des Ausländers kann unberücksichtigt bleiben, wenn andernfalls die Entscheidung des Bundesamtes verzögert würde. Artikel 28 Absatz 6 der Verordnung (EU) 2024/1348 bleibt unberührt. Der Ausländer ist hierauf und auf § 36 Absatz 3 Satz 3 hinzuweisen.

[...]

§ 36 Absatz 3 Satz 3 AsylG

Ein Vorbringen, das nach § 25 Absatz 2 im Verwaltungsverfahren unberücksichtigt geblieben ist, sowie Tatsachen und Umstände im Sinne des § 25 Absatz 1, die der Ausländer im Verwaltungsverfahren nicht angegeben hat, kann das Gericht unberücksichtigt lassen, wenn andernfalls die Entscheidung verzögert würde.

§ 69 AsylG Asylverfahrenshaft (Auszug)

(1) Ein Ausländer darf während des Asylverfahrens auf richterliche Anordnung nur in Haft genommen werden (Asylverfahrenshaft),

1. wenn im Rahmen der Überprüfung des Ausländers gemäß Artikel 5 oder 7 der Verordnung (EU) 2024/1356 seine Identität oder Staatsangehörigkeit aus von ihm zu vertretenden Gründen nicht festgestellt werden konnte und konkrete Anhaltspunkte dafür vorliegen, dass er sich der Nachholung dieser Feststellung im Asylverfahren entziehen wird, indem er untertaucht,

2. um sicherzustellen, dass der Ausländer die ihm durch eine Anordnung nach § 68 Absatz 1 Satz 1 oder Absatz 6 Satz 1 oder nach § 68a Absatz 1 Satz 1 oder Absatz 3 Satz 1 auferlegten rechtlichen Pflichten erfüllt, wenn er diesen Pflichten nicht nachgekommen ist, und weiterhin Fluchtgefahr besteht,

[...]

5. wenn von dem Ausländer eine erhebliche Gefahr für Leib und Leben Dritter oder bedeutende Rechtsgüter der inneren Sicherheit ausgeht. In den Fällen des Satzes 1 Nummer 5 beträgt die höchstzulässige Dauer der Haft jeweils einen Monat und kann jeweils bis zu einer Gesamtdauer von zwei Monaten verlängert werden.

(2) Die Anordnung von Asylverfahrenshaft ist unzulässig, wenn sie als Mittel der Zweckerreichung nicht geeignet oder verhältnismäßig ist oder wenn der Zweck der Haft durch ein milderer Mittel erreicht werden kann. Ein milderer Mittel als Haft kann auch die Leistung einer angemessenen Sicherheit durch den Ausländer oder einen Dritten darstellen. Auf das Verfahren zur Aussetzung der Haft gegen Sicherheitsleistung findet § 116a der Strafprozessordnung entsprechend Anwendung. Die Inhaftnahme ist auf die kürzest mögliche Dauer zu beschränken. Verwaltungsverfahren, auf die Absatz 1 Bezug nimmt, werden mit der gebotenen Sorgfalt

durchgeführt. Eine Verlängerung der Haft auf Grund von Verzögerungen in diesen Verwaltungsverfahren ist nur zulässig, wenn diese dem Ausländer zuzurechnen sind.

[...]

(4) Die für den Haftantrag zuständige Behörde kann einen Ausländer ohne vorherige richterliche Anordnung festhalten und vorläufig in Gewahrsam nehmen, wenn

1. dringende Gründe für die Annahme bestehen, dass die Voraussetzungen für die Anordnung von Haft nach Absatz 1 gegeben sind,

2. die richterliche Entscheidung über die Anordnung der Haft nicht vorher eingeholt werden kann und

3. der begründete Verdacht vorliegt, dass sich der Ausländer der Anordnung der Haft entziehen will.

Die Maßnahmen nach Satz 1 sind schriftlich anzuordnen. Der Ausländer ist unverzüglich dem Richter zur Überprüfung der Rechtmäßigkeit der Inhaftnahme und zur Entscheidung über die Fortdauer der Haft vorzuführen. Ist die Fortdauer der Haft nicht bis zum Ablauf des auf die Inhaftnahme folgenden Tages durch richterliche Entscheidung angeordnet, ist der Ausländer freizulassen.

§ 85 AsylG Sonstige Straftaten

(1) Mit Freiheitsstrafe bis zu einem Jahr oder mit Geldstrafe wird bestraft, wer

1. entgegen § 50 Absatz 6, sich nicht unverzüglich zu der angegebenen Stelle begibt,

2. wiederholt einer Aufenthaltsbeschränkung nach § 56 oder § 59b Absatz 1 zuwiderhandelt,

3. einer vollziehbaren Anordnung nach 60 Absatz 2 Satz 1, nicht rechtzeitig nachkommt,

4. entgegen 61 Absatz 1, eine Erwerbstätigkeit ausübt,

5. entgegen § 15 Absatz 2 Nummer 1 wider besseres Wissen eine erforderliche Angabe zu seinem Alter, seiner Identität oder seiner Staatsangehörigkeit nicht, nicht richtig oder nicht vollständig macht, soweit nicht die Tat in Absatz 2 mit Strafe bedroht ist oder

6. entgegen § 15 Absatz 2 Nummer 4 bis 6 einen Pass, Passersatz, erforderliche Urkunden, sonstige Unterlagen oder Datenträger nicht vorlegt, aushändigt oder überlässt.

(2) Mit Freiheitsstrafe bis zu drei Jahren oder mit Geldstrafe wird bestraft, wer im Asylverfahren vor dem Bundesamt oder im gerichtlichen Verfahren unrichtige oder unvollständige Angaben macht oder benutzt, um

1. die Anerkennung als Asylberechtigter, die Zuerkennung internationalen Schutzes im Sinne des § 1 Absatz 1 Nummer 2 oder die Feststellung der Voraussetzungen des § 60 Absatz 5 oder Absatz 7 des Aufenthaltsgesetzes zu erreichen oder

2. den Entzug der Anerkennung als Asylberechtigter, der Zuerkennung internationalen Schutzes im Sinne des § 1 Absatz 1 Nummer 2 den Widerruf oder die Rücknahme oder der Feststellung der Voraussetzungen des § 60 Absatz 5 oder Absatz 7 Satz 1 des Aufenthaltsgesetzes abzuwenden.

Artikel 9 AsylVfVO Pflichten des Antragstellers

(1) Der Antragsteller stellt den Antrag in dem Mitgliedstaat gemäß Artikel 9 Absätze 1 und 2 der Verordnung (EU) 2024/1351.

(2) Der Antragsteller kooperiert in den unter diese Verordnung fallenden Angelegenheiten uneingeschränkt mit den zuständigen Behörden gemäß Artikel 4, insbesondere indem er

a) die in Artikel 27 Absatz 1 Buchstaben a, b und d genannten Daten bereitstellt;

b) eine Begründung angibt, wenn er nicht im Besitz eines Identitäts- oder Reisedokuments ist;

- c) Angaben zu etwaigen Änderungen in Bezug auf Aufenthaltsort, Anschrift, Telefonnummer oder E-Mail-Adresse macht;
- d) biometrische Daten zur Verfügung stellt;
- e) seinen Antrag gemäß Artikel 28 einreicht und während des gesamten Verfahrens verfügbar bleibt;
- f) die in seinem Besitz befindlichen und für die Prüfung des Antrags relevanten Dokumente so schnell wie möglich aushändigt;
- g) an der persönlichen Anhörung unbeschadet des Artikels 13 teilnimmt;
- h) im Hoheitsgebiet des Mitgliedstaats verbleibt, in dem er sich gemäß Artikel 17 Absatz 4 der Verordnung (EU) 2024/1351 aufzuhalten hat.

Beschließen die zuständigen Behörden, Dokumente gemäß Unterabsatz 1 Buchstabe f einzubehalten, so stellen sie sicher, dass der Antragsteller unverzüglich Kopien der Originale erhält. Im Falle einer Überstellung gemäß Artikel 46 der Verordnung (EU) 2024/1351 händigen die zuständigen Behörden dem Antragsteller diese Dokumente zum Zeitpunkt der Überstellung wieder aus.

Artikel 40 AsylVfVO Ausdrückliche Rücknahme von Anträgen

(1) Ein Antragsteller kann seinen Antrag aus eigener Initiative zu jedem Zeitpunkt des Verfahrens zurücknehmen. Der Antrag wird vom Antragsteller persönlich schriftlich zurückgenommen, oder von seinem Rechtsberater, der seine rechtliche Vertretung ausübt, nach Maßgabe des nationalen Rechts abgegeben.

(2) Die zuständigen Behörden unterrichten den Antragsteller zum Zeitpunkt der Rücknahme des Antrags in einer Sprache, die er versteht oder von der vernünftigerweise angenommen werden kann, dass er sie versteht, gemäß Artikel 8 Absatz 2 Buchstabe c über alle verfahrensrechtlichen Folgen dieser Rücknahme.

(3) Findet die ausdrückliche Rücknahme vor einer anderen zuständigen Behörde als der Asylbehörde statt, so unterrichtet diese Behörde die Asylbehörde über diese Rücknahme. Die Asylbehörde erlässt eine Entscheidung, mit der erklärt wird, dass der Antrag ausdrücklich zurückgenommen wurde. Diese Entscheidung ist endgültig und kann nicht mit einem Rechtsbehelf gemäß Kapitel V dieser Verordnung angefochten werden.

(4) Hat die Asylbehörde in der Phase, in der der Antrag vom Antragsteller ausdrücklich zurückgenommen wurde, bereits festgestellt, dass der Antragsteller die Voraussetzungen für die Zuerkennung des internationalen Schutzes gemäß der Verordnung (EU) 2024/1347 nicht erfüllt, so kann sie trotzdem die Entscheidung treffen, den Antrag als unbegründet oder offensichtlich unbegründet abzulehnen.

Artikel 41 AsylVfVO Stillschweigende Rücknahme von Anträgen

(1) Ein Antrag wird für stillschweigend zurückgenommen erklärt, wenn

- a) der Antragsteller seinen Antrag ohne rechtfertigenden Grund nicht gemäß Artikel 28 eingereicht hat, obwohl er die tatsächliche Gelegenheit dazu hatte;
- b) der Antragsteller die Zusammenarbeit verweigert, indem er die Informationen gemäß Artikel 27 Absatz 1 Buchstaben a und b nicht angibt oder seine biometrischen Daten nicht erfassen lässt;
- c) der Antragsteller sich weigert, seine Anschrift anzugeben, wenn er eine hat, es sei denn, die zuständigen Behörden stellen eine Unterkunft bereit;

d) der Antragsteller ohne rechtfertigenden Grund nicht an einer persönlichen Anhörung teilgenommen hat, obwohl er gemäß Artikel 13 dazu verpflichtet war, oder ohne rechtfertigenden Grund die Beantwortung von Fragen während der Anhörung insoweit abgelehnt hat, als dadurch das Ergebnis der Anhörung nicht ausreicht, um über die Begründetheit des Antrags zu entscheiden;

e) der Antragsteller seinen Meldepflichten gemäß Artikel 9 Absatz 4 wiederholt nicht nachgekommen ist oder der zuständigen Behörde oder den Justizbehörden nicht weiterhin zur Verfügung steht, es sei denn, er kann nachweisen, dass diese Nichtverfügbarkeit auf bestimmte Umstände zurückzuführen ist, die sich seinem Einfluss entziehen;

f) der Antragsteller den Antrag in einem anderen als dem in Artikel 17 Absätze 1 und 2 der Verordnung (EU) 2024/1351 vorgesehenen Mitgliedstaat eingereicht hat und sich bis zur Bestimmung des zuständigen Mitgliedstaats oder gegebenenfalls bis zur Durchführung des Überstellungsverfahrens nicht im vorgesehenen Mitgliedstaat aufhält.

(2) Handelt es sich bei der Behörde, die prüft, ob der Antrag stillschweigend zurückgenommen wurde, um eine andere zuständige Behörde als die Asylbehörde, und ist diese Behörde der Auffassung, dass der Antrag als stillschweigend zurückgenommen zu betrachten ist, so unterrichtet diese Behörde die Asylbehörde entsprechend. Die Asylbehörde erlässt eine Entscheidung, mit der erklärt wird, dass der Antrag stillschweigend zurückgenommen wurde.

(3) Ist der Antragsteller anwesend, so unterrichtet die zuständige Behörde ihn zum Zeitpunkt der Rücknahme in einer Sprache, die er versteht oder von der vernünftigerweise angenommen werden kann, dass er sie versteht, gemäß Artikel 8 Absatz 2 Buchstabe c über alle verfahrensrechtlichen Folgen dieser Rücknahme.

(4) Die zuständige Behörde kann das Verfahren aussetzen, um dem Antragsteller die Möglichkeit zu geben, Unterlassungen oder Handlungen gemäß Absatz 1 zu begründen oder zu berichtigen, bevor eine Entscheidung ergeht, mit der der Antrag für stillschweigend zurückgenommen erklärt wird.

(5) Ein Antrag kann als unbegründet oder offensichtlich unbegründet abgelehnt werden, wenn die Asylbehörde in der Phase, in der der Antrag stillschweigend zurückgenommen wurde, bereits festgestellt hat, dass der Antragsteller nicht die Voraussetzungen für die Zuerkennung des internationalen Schutzstatus gemäß der Verordnung (EU) 2024/1347 erfüllt.

Anlage II zu § 29a AsylG – Sichere Herkunftsstaaten

Albanien

Bosnien und Herzegowina

Georgien

Ghana

Kosovo

Moldau (Republik)

Montenegro

Nordmazedonien

Senegal

Serbien

§ 1 Verordnung zur Bestimmung von sicheren Herkunftsstaaten für den internationalen Schutz

Sichere Herkunftsstaaten im Sinne des § 29b AsylG sind:

1. Albanien

2. Bosnien und Herzegowina

3. Georgien

4. Ghana
5. Kosovo
6. Moldau, Republik
7. Montenegro
8. Nordmazedonien
9. Senegal
10. Serbien